ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2013թ. թիվ 144-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգի» 5-րդ կետի և ՀՀ Լոռու մարզպետի կողմից 25.01.2013թ. թիվ 9-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013 թվականի հիմնական միջոցառումների պլանի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2013 թվականի հոկտեմբերի 24-ին Լոռու մարզում իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպումը» թեմայով:

2. Ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով հաստատել՝

1) ուսումնավարժության ղեկավար կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

3) միջնորդական խմբի կազմը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

3. ՈՒսումնավարժությունում ընդգրկել.

Լոռու մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովին, Լոռու մարզային փրկարարական վարչությանը, «Հայանտառ» ՊՈԱԿ «Լալվարի անտառտնտեսություն» և «Ձիլիզայի անտառտնտեսություն» մասնաճյուղերին, Ախթալա, Շնող և Թեղուտ համայնքների ղեկավար կազմին, նույն կազմակերպությունների և համայնքների արձագանքող ուժերի հրամանատարներին:

4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ. Անտոնյանին՝

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև ս/թ սեպտեմբերի 20-ը ներկայացնել իմ հաստատմանը.

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց նախապատրաստումը համաձայն հաստատված օրացուցային պլանի.

3) ապահովել համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ ուսումնավարժության անցկացման հարցերում (ազդարարում և այլն).

4) ճշգրտել փոխգործողությունների պլանները.

5) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2013թ. հոկտեմբերի 11-ին:

6) սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

5. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները.

2) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. օգոստոսի 28
ք.Վանաձոր